# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
# ՈՐՈՇՈՒՄ

N 215-Ա

25 ապրիլի 2024 թ.

**«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆՈՒ Ս. ԴԱՐԲԻՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ N 2 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՊԱՏՃԱՌՈՎ ԴՊՐՈՑԻ ԱՊՐԱՆՔԱՆՅՈՒԹԱԿԱՆ ԱՐԺԵՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի, 13-րդ հոդվածի, «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի, 19-րդ հոդվածի դրույթներով

որոշում եմ՝

1. «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունու Ս. Դարբինյանի անվան N 2 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի փոփոխության պատճառով դպրոցի ապրանքանյութական արժեքների հանձնում-ընդունումը սահմանված կարգով կազմակերպելու համար ստեղծել հանձնաժողով՝ համաձայն հավելվածի:

2. Հանձնաժողովի նախագահ Գևորգ Գևորգյանին՝ ապրանքանյութական արժեքների հանձնման-ընդունման աշխատանքներին ընդգրկել նաև դպրոցի նյութական պատասխանատու անձանց և համապատասխան ակտերը հինգ աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմ:

25.04.2024

X

ԿԱՐԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ

**ՄԱՐԶՊԵՏ՝** Подписано: SARGSYAN KAREN 3710840503

**Կ. ՍԱՐԳՍՅԱՆ**

ք. Գավառ

Հավելված
ՀՀ Գեղարքունիքի մարզպետի
2024 թվականի ապրիլի 25-ի
N 215-Ա որոշման

# Կ Ա Զ Մ

## «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆՈՒ Ս. ԴԱՐԲԻՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ N 2 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆՏՆՕՐԵՆԻ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՊԱՏՃԱՌՈՎ ԴՊՐՈՑԻ ԱՊՐԱՆՔԱՆՅՈՒԹԱԿԱՆ ԱՐԺԵՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

| | |
|---|---|
| Գևորգ Գևորգյան | -Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության գլխավոր մասնագետ, հանձնաժողովի նախագահ |
| Բուրմունք Հովհաննիսյան | -Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի իրավաբանական բաժնի պետի պարտականությունները կատարող |
| Դավիթ Սահակյան | -Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի ֆինանսական վարչության հաշվապահական հաշվառման բաժնի գլխավոր մասնագետ |
| Վիոլետա Գրիգորյան | -հանձնող |
| Խանում Ղազարյան | -ընդունող |
| Ավետիք Զաքարյան | -հաշվապահ |

25.04.2024

X

ՍԵՎԱԿ ԽԼՂԱԹՅԱՆ

ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ Подписано: KHLGHATYAN SEVAK 4007580049

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ «ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ» «ՀԱՍՏԱՏՎԱԾ Է» 08428824

Ս. ԽԼՂԱԹՅԱՆ